

ԿԱՐԾԻՔ

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ագրոլոգիստիկ համակարգը հանդիսանում է ագրոպարենային արտադրության ամբողջ արժեքային շղթայի արդյունավետության ապահովման առանցքային գործոններից մեկը՝ ընդգրկելով գյուղատնտեսական հումքի և պատրաստի արտադրանքի հավաքման, պահեստավորման, վերամշակման, փոխադրման և իրացման գործընթացները: Դրա արդյունավետ կազմակերպումը հնարավորություն է տալիս նվազեցնել արտադրական և փոխադրական ծախսերը, կրճատել բերքի և պատրաստի արտադրանքի կորուստները, ապահովել մատակարարման շարունակականություն և բարձրացնել արտադրանքի որակն ու շուկաների հասանելիությունը:

Երկրի տնտեսության զարգացման համատեքստում ագրոլոգիստիկ համակարգը կարևոր դեր է խաղում պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության մրցունակության բարձրացման և արտահանման ներուժի իրացման գործընթացներում: Արդյունավետ ագրոլոգիստիկան նպաստում է գյուղատնտեսական արտադրողների եկամուտների կայունացմանը, խթանում է տարածաշրջանային տնտեսական զարգացումը, ստեղծում է նոր աշխատատեղեր և նպաստում գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական ակտիվացմանը: Բացի այդ, այն հանդես է գալիս որպես կապող օղակ արտադրության և ներքին ու արտաքին շուկաների միջև՝ պայմանավորելով ագրոպարենային ոլորտի ինտեգրումը ազգային տնտեսական համակարգին:

Համաշխարհային տնտեսության պայմաններում ագրոլոգիստիկ համակարգի նշանակությունը առավել մեծանում է՝ հաշվի առնելով գլոբալ արժեքային շղթաների խորացումը, միջազգային առևտրի ինտենսիվացումը և պարենային շուկաների բարձր

մրցակցայնությունը: Զարգացած ագրոլոգիստիկ ենթակառուցվածքներն ու կառավարման մեխանիզմները թույլ են տալիս երկրներին ապահովել արտադրանքի ժամանակին և մրցունակ մուտքը միջազգային շուկաներ, նվազեցնել արտաքին շուկերի ազդեցությունը և ամրապնդել իրենց դիրքերը համաշխարհային պարենային շղթաներում: Այս առումով ագրոլոգիստիկան դիտարկվում է ոչ միայն որպես տեխնիկական կամ կազմակերպական համակարգ, այլև որպես ռազմավարական գործիք՝ նպաստող կայուն տնտեսական աճին, միջազգային մրցունակության բարձրացմանը և գլոբալ պարենային անվտանգության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության պարագայում ագրոլոգիստիկ համակարգի զարգացման խնդիրները հատկապես սրվում են երկու հարևան երկրների հետ փակ սահմանների առկայությամբ, տարածաշրջանային աշխարհաքաղաքական անկայունությամբ, սահմանային անցակետերում առաջացող ժամանակային և կազմակերպական սահմանափակումներով, ինչպես նաև արտաքին շուկաներին հասանելիության բարձր տրանսպորտային ծախսերով: Այս գործոնները էականորեն բարդացնում են գյուղատնտեսական արտադրանքի տեղափոխման, իրացման և արտահանման գործընթացները՝ մեծացնելով ծախսերը և նվազեցնելով հայկական արտադրանքի մրցունակությունը միջազգային շուկաներում:

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության համար ունի առանցքային տնտեսական և սոցիալական նշանակություն՝ հանդիսանալով զբաղվածության կարևոր աղբյուր, հատկապես գյուղական համայնքներում, և ապահովելով բնակչության պարենային պահանջների զգալի մասը: Ոլորտը նաև նպաստում է տարածաշրջանների սոցիալ-տնտեսական կայունությանը, եկամուտների ձևավորմանը և աղքատության մակարդակի նվազեցմանը: Այս համատեքստում ագրոլոգիստիկ համակարգի արդյունավետությունը դառնում է որոշիչ գործոն գյուղատնտեսության ներուժի լիարժեք իրացման, արտադրողականության բարձրացման և արտահանման հնարավորությունների ընդլայնման համար:

Միաժամանակ Հայաստանի լոգիստիկ համակարգը բնութագրվում է մի շարք համակարգային խնդիրներով, որոնք սահմանափակում են դրա արդյունավետությունը: Դրանց թվում են լոգիստիկ ենթակառուցվածքների անբավարար զարգացվածությունը, ժամանակակից պահեստային տնտեսությունների և սառնարանային համալիրների

պակասը, փոխադրումների բազմաձև (մուլտիմոդալ) կազմակերպման սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև լոգիստիկ գործընթացների թվայնացման և միասնական տեղեկատվական հարթակների բացակայությունը: Բացի այդ, ոլորտում առկա են կառավարման և ինստիտուցիոնալ բնույթի խնդիրներ՝ կապված պետական և մասնավոր հատվածների միջև համակարգման թերությունների, ինչպես նաև լոգիստիկ ծառայությունների շուկայի մասնատվածության հետ:

Այս պայմաններում ագրոլոգիստիկ համակարգի արդյունավետ կազմակերպումը վերաճվում է ոչ միայն տնտեսական արդյունավետության բարձրացման, այլև ռազմավարական նշանակություն ունեցող խնդրի: Այն անմիջականորեն առնչվում է պարենային անվտանգության ապահովմանը, արտահանման կայունության պահպանմանը և գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում: Արդյունավետ ագրոլոգիստիկան հնարավորություն է տալիս նվազեցնել արտադրանքի կորուստները, արդյունավետ դարձնել փոխադրումների երթուղիները, դիվերսիֆիկացնել արտահանման ուղղությունները և բարձրացնել հայկական ագրոպարենային արտադրանքի դիրքերը միջազգային արժեքային շղթաներում: Այդ պատճառով ագրոլոգիստիկ համակարգի զարգացումը Հայաստանի Հանրապետության համար պետք է դիտարկվի որպես տնտեսական անվտանգության և երկարաժամկետ զարգացման ռազմավարության կարևոր բաղադրիչ:

Հեղազոտության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանում ագրոլոգիստիկ համակարգի այն հիմնական գործոնների բացահայտումն է, որոնք ազդում են ագրոլոգիստիկ շղթայի արդյունավետ գործունեության վրա, ինչպես նաև հիմնավորում են այդ համակարգի զարգացման հիմնական ուղիները՝ հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը, առկա ենթակառուցվածքները և միջազգային լավագույն փորձը: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ վերլուծել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգը, դրա գործառույթները և կազմակերպման առանձնահատկությունները,
- ✓ գնահատել համակարգի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները,

- ✓ իրականացնել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի տեխնիկատնտեսական գնահատում,
- ✓ մշակել տնտեսամաթեմատիկական մոդելներ՝ տրանսպորտային ծախսերի օպտիմալացման նպատակով,
- ✓ կատարել կանխատեսումներ բեռնափոխադրումների ծավալների վերաբերյալ,
- ✓ ձևակերպել զարգացման ռազմավարական ուղիներ՝ հիմնված համաշխարհային լավագույն փորձի և տեղային վերլուծության վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտն են ՀՀ ագրոլոգիստիկ ենթակառուցվածքներն ու դրանց կազմակերպման ձևեր, իսկ առարկան՝ Հայաստանի ագրոլոգիստիկ համակարգի տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության տեսական հիմք են ծառայել միջազգային և տեղական հեղինակների աշխատանքները՝ լոգիստիկայի, ագրոբիզնեսի, մատակարարման շղթաների կառավարման և տնտեսամաթեմատիկական մոդելավորման բնագավառներում: Մեթոդաբանական մոտեցումները հիմնված են քանակական և որակական վերլուծության համակցման վրա, կիրառվել են վիճակագրական տվյալների մշակման, բազմագործոնային ռեգրեսիոն մոդելավորման և կանխատեսման մեթոդները, ինչպես նաև փոխկապակցությունների, կախվածությունների և դինամիկ փոխազդեցությունների վերլուծության գործիքակազմ: Հետազոտության տեղեկատվական հիմքը ներառում է ՀՀ վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի սննդի և գյուղատնտեսության կազմակերպության, Եվրաստատի, Միջազգային ճանապարհատրանսպորտային միության, ինչպես նաև մասնավոր ոլորտի տվյալները՝ ներառյալ մատակարարման ծավալները, տրանսպորտային ծախսերը և ենթակառուցվածքային ցուցանիշները:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության բովանդակությունը շարադրված է 140 էջի վրա:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթ պարունակող դրույթները, մատնանշվել է դրանց գործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի հետազոտության տեսական և մեթոդական հիմքերը» գլխում** հեղինակը հանգամանալիորեն ներկայացրել է ագրոլոգիստիկ համակարգի առաջարկվոր փորձն ու դրանք նշանակությունն՝ աշխարհում: Բացի այդ, ուսումնասիրվել է նաև Հայաստանի լոգիստիկ համակարգի արդի վիճակն ու զարգացման ընթացիկ միտումները: Հեղինակն իրականացրել է նաև ագրոլոգիստիկ համակարգում կատարված հետազոտությունների արդյունքների և միջազգային առաջավոր փորձի համեմատական վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատումը և առկա հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում» գլխում** հեղինակը գնահատել է Հայաստանի ագրոլոգիստիկ համակարգի տնտեսական արդյունավետությունը, ինչպես նաև համակարգի արդյունավետության ցուցանիշների վերլուծության միջոցով բացահայտել ոլորտի հիմնական խոչընդոտներն ու սահմանափակումները:

Ատենախոսության երրորդ՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» գլխում** հեղինակը տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ՝ իրականացրել է ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի տնտեսական գնահատում, ինչպես նաև բացահայտել զարգացման հնարավորությունները միջազգային առաջավոր փորձի համատեքստում: Բացի այդ, ատենախոսության հեղինակը ներկայացրել է ՀՀ լոգիստիկ համակարգում տրանսպորտային ծախսերի կրճատման տնտեսամաթեմատիկական մոդելավորումը: Հեղինակն ուսումնասիրել է նաև այլընտրանքային ճանապարհների ներգրավման և շահագործման անհրաժեշտությունը լոգիստիկ համակարգի զարգացման գործում:

Ատենախոսությունում կատարված վերլուծությունները ամփոփվել են հետաքրքիր և թիրախային **եզրակացություններով և առաջարկություններով:**

Ատենախոսության գիտական նորոյթը դրսևորվել է տեսագործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, ոնցից գիտական նորոյթն արտացոլող հիմնական դրոյթները հետևյալներն են՝

- ✓ հիմնավորվել է Հայաստանի Հանրապետությունում ագրոլոգիստիկ ենթահամակարգում այլընտրանքային ճանապարհների շահագործման տնտեսական և ռազմավարական արդյունավետությունը:
- ✓ Հիմնավորվել է ամերիկյան փորձի օրինակով ֆինանսական հոսքերի անկանխիկ կառավարման և ֆակտորինգային ծառայությունների ներդրման արդյունավետությունը ՀՀ լոգիստիկ համակարգում, ինչպես նաև առաջարկվել՝ բեռնատարների էլեկտրոնային հաշվիչներով վերազինում, միջնորդական և բրոքերային ծառայությունների ընդլայնում և «բեռնատարների կայանների» մոդելի ներդրում՝ լոգիստիկ ենթակառուցվածքների բարելավման նպատակով:
- ✓ Գնահատվել է ՀՀ լոգիստիկ համակարգում երթուղիների օպտիմալացման ազդեցությունը՝ բեռնափոխադրման ծախսերի կրճատմամբ և արդյունավետության բարձրացմամբ:
- ✓ Բացահայտվել է ՀՀ բեռնափոխադրման ծավալների փոփոխության ազդեցությունը երկրի ՀՆԱ-ի վրա՝ տնտեսամաթեմատիկական և էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:
- ✓ Իրականացվել է բեռնափոխադրման ծավալների հնգամյան կանխատեսում՝ ընդգծելով զարգացման հիմնական միտումները:

Ատենախոսությունում ստացված՝ Հայաստանի ագրոլոգիստիկ համակարգի գնահատման քանակական և որակական վերլուծության արդյունքները, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի տեղայնացման համատեքստում դրանց զարգացման ուղղություններով առաջարկվող լուծումները ունեն կարևոր **տեսագործնական նշանակություն:** Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող ակադեմիական շրջանակների, տնտեսագետների, պետական կառավարման մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների և տրանսպորտային

ենթակառուցվածքների կատարելագործման գծով պատասխանատուների, ոլորտին առնչվող մասնավոր կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

Միևնույն ժամանակ, ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները լիովին զերծ չեն որոշակի թերություններից, և այդ առնչությամբ կատարված դիտողությունները նպատակահարմար է դիտարկել որպես առաջարկներ, որոնք կարող են արժանանալ հեղինակի ուշադրությանը քննարկվող թեմայով հետագա ուսումնասիրությունները շարունակելու դեպքում: Դրանք են՝

1. Ատենախոսության մեջ կիրառված տնտեսամաթեմատիկական մոդելների արդյունքներն, ընդհանուր առմամբ, հիմնավորված են, սակայն ցանկալի կլիներ առավել մանրամասն անդրադառնալ կիրառված մոդելների սահմանափակումներին և արտաքին գործոնների հնարավոր ազդեցությանը ստացված արդյունքների վրա, ինչը կբարձրացներ իրականացված վերլուծության թափանցիկությունն ու գիտական նշանակությունը:
2. Հաշվի առնելով ատենախոսության թեման և հիմնական նպատակը՝ հետազոտության շրջանակներում նպատակահարմար կլիներ առավել շեշտադրել Հայաստանի ագրոլոգիստիկ համակարգի կատարելագործման հնարավորությունները և զարգացման հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրանքի բեռնավոխադրումների առանձնահատկությունները:
3. Աշխատանքը կարող էր էականորեն շահել, եթե հեղինակը ռուսաստանյան և արտասահմանյան հեղինակների աշխատություններից բացի, առավել լայնորեն ընդգրկեր նաև հայկական հեղինակների գիտական հրապարակումները և վերլուծությունները՝ ագրոլոգիստիկ համակարգի զարգացման և լոգիստիկ ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, ինչը թույլ կտար առավել ամբողջական ներկայացնել թեմայի ուսումնասիրվածության մակարդակը տեղական գիտական դաշտում:

Եզրակացություն

Եզված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը: Գիտական վերլուծության առումով դրանք

կարելի է դիտարկել որպես ոչ էական, սակայն ընդունելի՝ հեղինակի կողմից հետագա ուսումնասիրությունները շարունակելու առումով:

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածականատենախոսությունը գիտական և գործնական կարևոր նշանակություն ունեցող, ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է: Աշխատանքում ակնհայտորեն դրսևորվում է հեղինակի կարողությունը՝ համակարգված և տրամաբանական մոտեցմամբ իրականացնել բարդ սոցիալ-տնտեսական համակարգի ուսումնասիրություն, վերլուծել բազմակողմանի տվյալներ և դրանց հիման վրա ձևակերպել հիմնավորված եզրակացություններ:

Հեղինակի կողմից իրականացվել է թեմայի վերաբերյալ որակյալ և համապարփակ վերլուծություն՝ հիմնված ինչպես ժամանակակից տեսական մոտեցումների, այնպես էլ գործնական և վիճակագրական նյութերի լայն շրջանակի ուսումնասիրության վրա: Ատենախոսության շրջանակներում կիրառվել են գիտահետազոտական տարբեր մեթոդներ, այդ թվում՝ տնտեսամաթեմատիկական մոդելներ, որոնք հնարավորություն են տվել գնահատել ագրոլոգիստիկ համակարգի զարգացման միտումները, բացահայտել դրա արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները և հիմնավորել զարգացման ռազմավարական ուղղությունները Հայաստանի Հանրապետության պայմաններում:

Ատենախոսությունը վկայում է հեղինակի մասնագիտական պատրաստվածության, վերլուծական մտածողության և կիրառական խնդիրների լուծման հմտությունների բարձր մակարդակի մասին: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի 7 գիտական հոդվածներում և քննարկվել մասնագիտական գիտաժողովներում ու գիտական հարթակներում, ինչը նպաստել է դրանց մասնագիտական հանրայնացմանը և գիտական շրջանառությանը:

Ատենախոսության սեղմագիրը լիովին համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, հստակ արտացոլում է հետազոտության նպատակները, հիմնական դրույթներն ու եզրակացությունները և ներկայացնում է կատարված աշխատանքի համառոտ, բայց ամբողջական պատկերը:

Այսպիսով, Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02.-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության թեկնածու

Տ.Գ.Վարդանյան

Տ.Գ.Վարդանյանի ստորագրությունը հաստատում
եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝

Ն.Հ.Դարբինյան



07.01.2025թ.